հոգսերից»։ Երբ գետի հոսանքը պտույտ է գալիս, այն ժամանակ ջուրը այնպէս է պղտորում, որ արևի լուսով իսկ այնտեղ ոչինչ չեն կարողանալ տեսնել. բայց վեր առէք այդ պղտոր ջրից մի բաժակ, թողէք որ ինքն իրան պարզուի, այն ժամանակ բոլոր կեղտոտութիւնները կնստի յատակին և ջուրը կդառնայ արտասուքի պէս մաքուր։ Թողէք որ ձեր հոգու մէջ էլ պղտորութիւնը յատակին նստի. գոնէ մի փոքր ժամանակ հեռացէք կեանքի պղտոր հոսանքից և առանձնացէք Աստուծոյ հետ։

Թարգմ. **Գրիգոր քահ. Նոր-Արեւեանց.**

ՄԱՅՐ ԱԹՈՌ

ՓՈԽԱՐՔԱՅԻ ԱՅՑԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

23 Դեկտեմբ. 1906 թ.

Այսոյս 19-ին աղդիս Վեհափառ Հայրապետի հրամանով Տեղապահ Տ. Գէորգ Արքեպիսկոպոսը ուղևորուելով Երևան՝ Տ. Յուսիկ եպիսկոպոսի, Սինոդի անդամ Տ. Բաբգէն վարդապետի հետ ներկայանում են Կովկասի Տ. Փոխարքային և Նորին Սրբութեան կողմից բարի գալուստ մաղթելով, հրաւիրում են Նորին Պայծառափայլութեան շնորհ բերել ս. Էջմիածին ընտանիքով հանդերձ։ Յաջորդ օրը Վեհափառ Հայրապետի կանխագոյն կարգադրութեամբ Տեղապահ սրբազանը աղ ու հաց ներկայացրեց վանքի պարբսպի մուտքի առաջ Տ. Փոխարքային և շնորհաւորեց նրա բարի ժամանումը ս. Էջմիածին։ Ապա սկսուեց զանդահարութիւնը և Տ. փոխարքան, իշխանուհի կոմսուհին, դուստրը, հարսը, և այլ բարձրաստիճան հիւրերը և հոգևորական դասը շրջապատուած ժողովրդի խուռն բազմու-

թեամբ շարժուեցին դէպի առաջ, ուր շարքով կանգնած էին Ճեմարանի սանները իրենց ուսուցիչներով. իսկ Տրդատայ դռնից մինչև Մայր Տաճարի մուտքը շուրջառաւոտուած շարուած էին միաբանները և երգեցիկ խումբը։ Տրդատայ դուռը հասնելուն պէս երգեցիկ խումբը սկսեց երգել պատշաճ շարական մինչև Տ. Փոխարքայի Մայր Տաճարի մուտքը, ուր կանգնած էին երկու վարդապետ խաչով և աւետարանով։ Տաճարի ներսում Իշման սեղանի առաջ կանգնելով, համառօտ մաղթանքից յետոյ Տեղապահ սրբազանը օրհնեց Թագաւոր Կայսեր, Կայսրուհուն, ամբողջ Կայսերական տունը և Տ. Փոխարքային, կոմսուհուն, դստերը և հարսին։ Տաճարում Տ. Փոխարքան և իւրայիններին համբուրելով սեղանի վրայ դրուած մասունքները, մտան ներսի թանգարանը և մասանց խորանը և Գէորգ Արքեպիսկոսի առաջնորդութեամբ երնելով Մայր Տաճարից, դիմեցին դէպի վեհարան և այցելեցին արտաքին դահլիճում Վեհափառ Հայրապետին. ապա հիւրերին թողնելով նոյն դահլիճում, Վեհափառը և Փոխարքան իւր ընտանիքով առանձնացան Ծաղկեայ դահլիճը, ուր մի քանի րոպէ միմեանց խօսքեր փոխանակելուց յետոյ Վեհը իւր ձեռքով շնորհեց Իշխանուհի կոմսուհուն ս. Յակոբի մասունքի նշխարը՝ դեռեղած հին, բայց գեղեցկաշէն խաչի մէջ, և մի մատանի։ Ապա Փոխարքան երնելով, մտաւ սեղան պատրաստած դահլիճի կողքին դտնուած փոքրիկ սենեակը ընտանիքով, այդ միջոցին Վեհը փոխադարձաբար այցելեց նոցա նոյն սենեակում, ընդունելութիւնը առհասարակ շատ սիրալիր էր և ուրախ. ապա Վեհը սեղանն օրհնելով, կրկին գնաց ներս և հիւրերը բաղմեցին նախաճաշի։ Կենաց բաժակներ առաջարկում էր [Տեղապահ սրբազանը, առաջարկուեցին Թագաւոր Կայսեր, Տ. Փոխարքայի, Կոմսուհուն, Նորին Սրբութեան և այլ կենացներ։ Նախաճաշի ժամանակ Եղիշէ Ծ. վարդապետը երկրորդ անգամ բաժակ առաջարկեց Տ. Փոխարքայի և նորա ընտանիքի կենացը։ Իւրաքանչիւր կենացի ժամանակ կեցցէներով թնդում էր դահլիճը։ Նախաճաշից յետոյ Թանկագին

հիւրերը Տեղապահ սրբազանի, Մեսրոպ, Եղիշէ և այլ միաբանների առաջնորդութեամբ այցելեցին Մայր Աթոռի թանգարանը, մատենադարանը, լճի ափը, տպարանը և ճեմարանը։ Ճեմարանի հանդիսարանում Մեսրոպ վարդապետը մի քանի խօսքով բարի գալուստ մաղթեց փոխարքային որից յետոյ Տ. Փոխարքան մի քանի խօսքով գոհունակութիւն յայտնեց։ Աշակերտները երգեցին «Տէր, կեցո՛ զԿայսրն»։ Ճեմարանի ննջարան, դրադարան այցելելուց յետոյ Փոխարքան մտաւ և Սինոդ և միաբանների հետ Զուարթնոց աւերակներին այցելելուց յետոյ՝ մեկնեց դէպի Երևան։ Առհասարակ Կովկասի Տ. Փոխարքայի իւր շքախմբով տեսակցութիւնը Նորին Սրբութեան հետ շատ համակրական, սիրալիր և ուրախ տրամադրութեան ներքոյ էր։ Փոխարքան Ալէքսանդրապոլից ուղարկեց Վեհափառին հետևեալ շնորհակալական հեռագիրը։



ՓՈԽԱՐՔԱՅԻ ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ.

Կրկին կնոջս հետ միասին յայտնում եմ Ձերդ Սրբութեան և միաբանութեան շնորհակալութիւն հիւրասէր և սիրալիր ընդունելութեան համար, որ ցոյց տուիք իմ ընտանիքիս։ Ցանկանում ենք առողջութիւն և յանձնում ենք Մեզ Ձեր սուրբ աղօթքներին։

Կոմս Վորոնցով-Դաշկով.